

ՀՏԴ 796.012

DOI: 10.53068/25792997-2023.2.9-61

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Բ. Մկրտչյան

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Մարմնամարզություն, հետազոտություն, գիտահետազոտական թեմա, գեղարվեստական, առողջարարական, սպորտային:

Հետազոտության արդիականություն: Ուսումնասիրելով սպորտային մարմնամարզությանը վերաբերող մի շարք գիտական աշխատանքներ, պարզվել է, որ կան թեմաներ և ուղղություններ, որոնք վերջին տարիների գիտական հետազոտությունների ուսումնասիրությունների շարքից դուրս են մնացել: Հիմնական ուսումնասիրությունները կատարվել են շարժողական ընդունակությունների մշակման և կատարելագործման, որոշ դեպքերում՝ տարրի տեխնիկայի վերաբերյալ թեմաներով: Այդ պատճառով որոշվեց անցկացնել ուսումնասիրություն՝ վեր հանելու այն ոլորտները, որոնք սպորտային մարմնամարզության գիտության տեսադաշտից դուրս են մնացել [5, 10]: Այս հարցի պարզաբանումը թույլ կտա նախանշել այս մարզաձևում գիտական հետազոտությունների այն ուղղությունները,

որոնք կարող են նպաստել մարմնամարզությունում պատրաստության համակարգերի կատարելագործմանը:

Հետազոտության նպատակն է՝ ատենախոսական աշխատանքների վերլուծության հիման վրա պարզաբանել մարմնամարզության վերաբերյալ գիտական հետազոտությունների ուղղությունները, չուսումնասիրված ոլորտները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վեր հանել վերջին տարիների ուսումնասիրության առարկա դարձած մարմնամարզությունում ատենախոսական աշխատանքների թեմաները և ոլորտները:

2. Պարզաբանել մարմնամարզությունից կատարված ատենախոսական աշխատանքների ժամանակահատվածը:

3. Բացահայտել ուսումնասիրությունների շրջանակից դուրս մնացած թեմաները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. ինտերնետային աղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն,

2. ազգային գրադարանի ուսումնասիրություն:

3. մաթեմատիկական վիճակագրություն:

Հետազոտությունը կազմակերպվել և անցկացվել է 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում, հետևյալ հաջորդականությամբ. ուսումնասիրվել է մարմնամարզության վերաբերյալ ատենախոսական շուրջ 300 աշխատանք: Ազգային գրադարանից դուրս են բերվել անկախ Հայաստանում մարմնամարզության վերաբերյալ պաշտպանված ատենախոսական աշխատանքներն ու սեղմագրերը: Ուսումնասիրությունն իրականացվել է մի քանի փուլով. Առաջինում՝ ընդհանուր տվյալներից առանձնացվել են մարմնամարզությանը վերաբերող ատենախոսական աշխատանքները, երկրորդում՝ առանձնացվել են աշխատանքներն ըստ ուղղվածության, ըստ տարեթվերի և ըստ քաղաքների:


Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ատենախոսական աշխատանքներն առավել հեշտությամբ վեր հանելու և դասակարգելու համար, ըստ ունեցած տվյալների [9], մեր կողմից տարեթվերը բաշխվել են ըստ ժամանակահատվածների՝ 5 տարվա կտրվածքով:

Բացառություն է միայն 2016-2022թթ. ընկած ժամանակահատվածը, որը ներառում է վերջին 7 տարվա ցուցանիշները:

Մեր կողմից վեր են հանվել նաև այն քաղաքները (48 քաղաք), որտեղ տեղի է ունեցել ատենախոսական աշխատանքների պաշտպանությունը: Աշխատանքների գրեթե 1/3-ը (28%՝ 85 աշխատանք) պաշտպանվել են Սանկտ Պետերբուրգում, 17%-ը՝ 51 աշխատանք՝ Մոսկվայում: 6.5% (20 աշխատանք)՝ Մալախովկայում, 12-ական աշխատանք՝ Օմսկում և Վոլգոգրադում: Իսկ անկախ Հայաստանում մարմնամարզության վերաբերյալ կատարված ատենախոսական աշխատանքները մոտ 10-ն են (3.3%):

Ուսումնասիրված ատենախոսական աշխատանքները (տրամագիր 1) ցույց են տալիս, որ 1991-1995թթ. ընկած ժամանակահատվածում մարմնամարզությանը վերաբերող ատենախոսական աշխատանքներ շատ քիչ են կատարվել: Առավել մեծաքանակ աշխատանքներ կատարվել են հատկապես 2006-2010-ն ընկած ժամանակահատվածում: Տրամագրում ակնհայտ է, որ 2001թվականից սկսած՝ մարմնամարզության վերաբերյալ ատենախոսական աշխատանքների թվաքանակի աճ է գրանցվել, որը շարունակվում է մինչև 2022թ.: Այս հանգամանքը թերևս պայմանավորված է նրանով, որ

էլեկտրոնային հասցեն, որից օգտվել ենք մար, պաշտոնապես գործում է 2009թ. հետազոտությունը կազմակերպելու հա [14]:



Տրամագիր 1. Տարբեր տարիներին մարմնամարզության վերաբերյալ կապարված պրենսիտական աշխատանքների քանակ


Աղբյուրում տեղակայված մինչև 2009թ. ատենախոսական աշխատանքներն առավել հավանական է, որ հավաքագրվել են ըստ հնարավորությունների: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ըստ Վ. Մուստանի և Օ. Ջագրևսկու [9] հետազոտության՝ 1946-1966 թթ. ժամանակահատվածում ԽՍՀՄ-ում մարմնամարզության վերաբերյալ կատարվել է 380, իսկ 1991-2009թթ.՝ ՌԴ-ում՝ 104 հետազոտական աշխատանք, այսպիսով՝ հաստատելով, որ նախկին տվյալների

հետ համեմատած աշխատանքների քանակը 3/4 անգամ կրճատվել է: Վերլուծելով այս ամենը, հավանական հանգամանքների փաստարկների մեջ չենք կարող չընդգծել, որ խորհրդային ժամանակահատվածում, ատենախոսական աշխատանքների քանակի նման տարբերություն առաջին հերթին պայմանավորված է միաժամանակ 15 հանրապետություններից ստացված ատենախոսական աշխատանքների քանակով: Մյուս կողմից ԽՍՀՄ-ում գոյություն ուներ ասպիրանտ-

ների և հայցորդների նպատակային ընդունելության համակարգ, որը խթանում էր նրանց հոսքը գիտության ոլորտ:

2-րդ տրամագրում, առանձնացնելով մարմնամարզության ձևերը, երևում է, որ առավել մեծաքանակ ատենախոսությունները վերաբերում են **գեղարվեստական մարմնամարզությանը**՝ 31% կամ 89 աշխատանք: Այստեղ կատարված հետազոտությունների մեծամասնությունը շարժողական ընդունակությունների մասին է (25 աշխատանք), բավական թվով հետազոտություններ են կատարվել նաև գեղար-

վեստական մարմնամարզության պարապմունքների մեթոդիկայի (13 աշխատանք), պատրաստության ձևերի վերաբերյալ (8 աշխատանք) [10, 4], հոգեբանամանկավարժական տեխնոլոգիաների ներմուծմանը՝ հատկապես թիմային մարզումային և մրցումային վիճակներում (6 աշխատանք), գեղարվեստական մարմնամարզությունում ուղղվածությանն ու պրոֆիլացմանը (7 աշխատանք), մրցավարությանը (6 աշխատանք) [8], ինչպես նաև ֆիզիոլոգիական բնութագրումներին (4 աշխատանք):



Տրամագիր 2. Մարմնամարզության վերաբերյալ կատարված աշխատանքների դասակարգում

Որպես առանձին և քիչ ուսումնասիրված թեմա՝ այստեղ ընդամենը 2 աշխատանք է, որ վերաբերել է սպորտային ընտրության հիմնահարցերին, 1 աշխատանք՝ մարմնամարզության տերմինաբանությանը [2] և 1 աշխատանք՝ ռիթմի գագաղությանը:

Կան գեղարվեստական մարմնամարզությանը վերաբերող որոշակի աշխատանքներ, որոնք չեն հաշվարկվել վերոնշյալ դասակարգման մեջ:

Մեր կողմից առանձնացված ատենախոսական աշխատանքներից 72-ը (25%) վերաբերում են **սպորտային մարմնամարզությանը**: Այստեղ պատկերը հետևյալն է. ատենախոսական աշխատանքներից 14-ը վերաբերում է պատրաստության կողմերին և ձևերին [11], առանձին գործիքների վրա բարդ մարմնամարզական վարժությունների յուրացմանը և կատարելագործմանը՝ 11 աշխատանք, շարժողական ընդունակությունների մշակմանը՝ 10, սպորտային մարմնամարզության պարապմունքների մեթոդիկային և դրա մշակմանը՝ 6, սպորտային մարմնամարզական հենքային ընդունակությունների մշակմանը՝ 5, կոնկրետ մարզագործիքին որևէ ընդունակության մշակմանը՝ 4, ընտրությանը՝ 3, անատոմիգիոլոգիական առանձնահատկություններին՝ 3 աշխատանք: Մարզիչմասնագետի պատրաստման վերաբերյալ

աշխատանքները թվով 6-ն են: Առավել քիչ ուսումնասիրված, բայց և այնպես առկա աշխատանքների ցուցակում են բեռնվածության՝ 2, տեխնիկային՝ 2 [5], ինքնաապահովմանը՝ 1, կենսամեխանիկական օրինաչափություններին՝ 1 [3] հետազոտական աշխատանք: Այստեղ նույնպես կան որոշակի աշխատանքներ, որոնք չեն հաշվարկվել մեր դասակարգման մեջ:

Համեմատության համար նշենք, որ ի տարբերություն գեղարվեստական մարմնամարզության, սպորտայինում բացակայում են մրցավարության վերաբերյալ, ինչպես նաև հոգեբանամանկավարժական ուղղվածության աշխատանքները:

Առողջարարական մարմնամարզության վերաբերյալ աշխատանքները թվով 57-ն են (20%): Այստեղ պատկերը փոքրինչ խառն է, կապված այն հանգամանքով, որ առողջարարական մարմնամարզությունն իր մեջ ներառում է ռիթմիկ, աերոբ, հիվանդությունները կանխարգելող, բեռնվածությունը որոշող, կանանց, տարեցների, հատուկ խմբերում ընդգրկված երեխաների և այլ բաժիններ: Ըստ մեր հետազոտության, առհասարակ առողջարարական մարմնամարզության հնարավորությունների, մեթոդների վերաբերյալ հետազոտությունները գերակշիռ մաս են կազմում (18) [12], որոշակի քանակությամբ աշխատանքներ կան

մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ տարվող առողջարարական մարմնամարզությունից (7), կանանց (4) [7], տարեցների (2), դիթմիկ (4), աերոբ (4) մարմնամարզությունից, առողջարարական մարմնամարզության մեջ մեր կողմից ընդգրկվել էին նաև մարզիկների բեռնվածության և աշխատունակության գնահատման վերաբերյալ ատենախոսական աշխատանքներ:

Ինչպես երևում է 2-րդ տրամագրում, ըստ մարմնամարզության բաժինների, ատենախոսական աշխատանքների հաջորդ խումբը վերաբերում է ուսանողի կամ **բուհում մարմնամարզությանը** [13]: Այս ուղղությամբ կատարվել է 34 գիտահետազոտական աշխատանք (12%):

Դպրոցական ծրագրում մարմնամարզության [6] վերաբերյալ ատենախոսական հետազոտությունները 29-ն են կամ 9%:

Բացահայտվեց, որ մենաքիչ ատենախոսական հետազոտությունները **սպորտային ակրոբատիկայի [1]** վերաբերյալ են (7 աշխատանք կամ 3%):

Քանի որ ներկայացվեցին բուհում և դպրոցում մարմնամարզության վերաբերյալ աշխատանքները, նշենք, որ նախադպրոցական տարիքի մարմնամարզությունը ներառվել է առողջարարական մարմնամարզության բաժնում, քանի որ

այստեղ առավել շեշտադրված էր մարմնամարզության ֆիզկուլտուրային և առողջարարական նշանակությունը:

Եզրակացություն: Հետազոտության արդյունքներն ամփոփելով՝ կատարվել են հետևյալ եզրակացությունները.

1. Մեզ համար հասանելի գրական աղբյուրների, ատենախոսական աշխատանքների սոցիալական հարթակում, 2009 թ. (1986-2009՝ ոչ պաշտոնական) մինչ օրս, կատարվել է մարմնամարզությանը վերաբերող 300-ից ավելի ատենախոսական աշխատանք:

2. Մարմնամարզությունում հետազոտությունների զգալի մասը կապված են շարժողական ընդունակությունների ուսումնասիրման, իսկ մարմնամարզության սպորտային ձևերում՝ գեղարվեստական մարմնամարզության վերաբերյալ:

3. Ատենախոսական աշխատանքների ուսումնասիրումը պարզ դարձրեց, որ մարզումային գործընթացի, հատկապես բարդ տարրերի ուսուցման, ինչպես նաև մարմնամարզիկի բեռնվածության, կենսաքիմիական առանձնահատկությունների և կենսամեխանիկական օրինաչափությունների վերաբերյալ հետազոտական աշխատանքները քիչ մաս են կազմում:

4. Քիչ են հետազոտությունները բարձրակարգ մարմնամարզիկների մարզումային գործընթացի, ինչպես նաև բարձրակարգ մարզչի պատրաստման և

հոգեբանամանկավարժական մեթոդների հետ կապված:

5. Սպորտային մարմնամարզության վերաբերյալ ատենախոսական աշխատանքներում բացակայում են մրցավարության, ինչպես նաև մարմնամարզության երիտասարդացմամբ պայմանավորված սկսնակների ընտրության վերաբերյալ աշխատանքները:

6. Անկախ Հայաստանում մարմնամարզության վերաբերյալ ատենախոսական աշխատանքները չեն գերազանցում մեկ տասնյակը, և հիմնականում վերաբերվում են դպրոցական ծրագրի մարմնամարզության բաժնին, նաև մարմնամարզության առողջարարական ուղղվածությանը, չեն ընդգրկում բարձրակարգ մարմնամարզիկին անհրաժեշտ պատրաստության համակարգերի կատարելագործման բաղադրիչներ:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Антонов Г. В., Обучение акробатическим прыжкам на основе их биомеханического анализа и морфо-функциональных особенностей акробатов-прыгунов: дис. канд. педагогических наук, диссертация, Минск, 1983, 171с.
2. Бобырева Н.Н., Общее и различное в терминологии художественной гимнастики русского и английского языков, дис. канд. филологических наук, автореферат, Казань, 2010, 28с.
3. Барсагов М. Д., Методика специальной подготовки гимнастов к приземлению в соревновательном упражнении на основе биомеханики двигательных действий: дис. канд. педагогических наук, автореферат, Нальчик, 2005, 28с.
4. Винер-Усманова И.А., Интегральная подготовка в художественной гимнастике, дис. докт. педагогических наук, автореферат, Санкт-Петербург, 2013, 47с.
5. Загrevский В.О., Техника выполнения и методика обучения группе упражнений "перелет Ткачева" на перекладине: дис. канд. педагогических наук, автореферат, Томск, 2012, 24с.
6. Корунец А. И., Организация и методика физического воспитания школьниц 10-13 лет с использованием средств спортивной гимнастики: дис. канд. педагогических наук, диссертация, Москва, 1998, 113с.

7. Курова Т. В., Содержание и методика занятий оздоровительной гимнастикой с женщинами пожилого возраста сферы умственного труда: дис. канд. педагогических наук: автореферат, Санкт-Петербург 2016, 24с.
8. Медведева Е.Н., Объективизация технической ценности элементов структурных групп художественной гимнастики: дис. канд. педагогических наук, автореферат, Санкт-Петербург 2017, 55с.
9. Мустаев В.Л., Загревский О.И., О направлениях научных исследований в спортивной гимнастике, Вестник Томского государственного университета. 2013. № 373. С. 166–170.
10. Осипова Е.Б., Прыжковая подготовка спортсменок в художественной гимнастике на основе объективных показателей качества выполнения профилирующих упражнений, дис. канд. педагогических наук, автореферат, Санкт-Петербург 2019, 25с.
11. Степанова И. Ю., Структура и динамика показателей физической подготовленности гимнасток 7-12 лет как основа управления тренировочным процессом, дис. канд. педагогических наук, диссертация, Москва, 2000, 147с.
12. Сафиулин Р.Ф.,,, Влияние различных методик оздоровительной гимнастики на функциональное состояние кардиореспираторной системы учащихся 12-14 лет, дис. канд. биологических наук, автореферат, Челябинск, 2009, 23с.
13. Цильке Н.Г., Совершенствование методики обучения гимнастическим упражнениям студентов общего курса физкультурного вуза, дис. канд. педагогических наук, автореферат, ФГБОУ ВО, 2016, 24с.
14. <https://www.dissercat.com/content/sredstva-i-metody-vospitaniya-fizicheskikh-kachestv-yunykh-gimnastov-na-etape-nachalnoi-spet>

STUDY OF DISSERTATIONS ON GYMNASTICS

G. B. Mkrtchyan

Armenian State Institute of Physical
Culture and Sport Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: gymnastics, sports, artistic, recreational, gymnastics at school, gymnastics at university.

Research aim: The purpose of the study is to clarify the directions of scientific research in gymnastics, its unexplored areas based on the analysis of dissertations.

Research methods and organization: The study was organized and carried out in the 2022-2023 academic year. A complete series of dissertations on gymnastics was studied, 300 works from the series were extracted and distributed by directions, by years and by cities.

Research results and analysis: The dissertations studied show that in 1991-1995 very little was done related to gymnastics. The most extensive research work was carried out especially from 2006 to 2010. According to other researchers, 380 research works on gymnastics were carried out in the USSR (1946-1966), and 104 in the Russian Federation (1991-2009), thus confirming that the number of works was reduced by 3/4 times compared to the previous data. However, it should be emphasized that in the Soviet period, the advantage in the number of dissertations was due to the number of dissertations received simultaneously from 15 republics.

Most of the works - 31% or 89 works relate to rhythmic gymnastics, 25% or 72 works - to sports gymnastics, 20% or 57 works are on recreational gymnastics. There are 34 (13%) and 26 (9%) works on gymnastics in the university and school curriculum, respectively, the least scientific papers on sports acrobatics (7 articles or 3%).

Conclusion: The study of the dissertations revealed that the bulk of the research is mainly related to the development and improvement of motor skills, with a large number of works on rhythmic gymnastics. Research works regarding the training process, especially the development of complex elements, the athlete's load, biochemical features and biomechanical patterns, as well as the training of a high-quality coach and psychological and pedagogical methods, are rather few. Dissertations on sports gymnastics lack refereeing, as well as works on the selection of newcomers in connection with the rejuvenation of

gymnastics. There are no more than a dozen dissertations on gymnastics in independent Armenia and they do not include components of improving the training systems necessary for a high-class gymnast.

ИЗУЧЕНИЕ ДИССЕРТАЦИОННЫХ РАБОТ ПО ГИМНАСТИКЕ

Г. Б. Мкртчян

*Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: гимнастика, спортивная, художественная, оздоровительная, гимнастика в школе, гимнастика в вузе.

Цель исследования: на основе анализа диссертационных работ уточнить направления научных исследований в гимнастике, неисследованные области.

Методы и организация исследование. Исследование было организовано и проведено в 2022-2023 учебном году. Был изучен полный цикл диссертаций по гимнастике, из которых извлечено и разнесено по направлениям, годам и городам около 300 работ.

Анализ результатов исследование. Изученные диссертационные работы показывают, что в 1991-1995 гг. велись небольшие работы связанные с гимнастикой. Наиболее масштабные исследовательские работы были проведены особенно в период 2006-2010 гг. По данным других исследователей, в СССР (1946-1966 гг.) было выполнено 380, а в РФ (1991-2009 гг.) 104 исследовательских работ по спортивной гимнастике, что подтверждает сокращение количества работ в 3/4 раза по сравнению с предыдущими данными. Однако нельзя не подчеркнуть, что в советский период преимущество по количеству диссертационных работ было обусловлено количеством диссертационных работ поступивших одновременно из 15 республик.

Больше всего работ - 31% (89 работ) относятся к художественной гимнастике, 25% или 72 – к спортивной гимнастике. 57 (20%) работ по оздоровительной гимнастике. По гимнастике в вузовской и школьной программе соответственно 34 (13%) и 26 (9%) работ, меньше всего научных работ по спортивной акробатике (7 статей или 3%).

Краткие выводы: При рассмотрении диссертаций выяснилось, что основной объем исследований в основном связан с развитием и совершенствованием двигательных навыков, при этом большое количество работ посвящено художественной гимнастике. Исследовательские работы, касающиеся тренировочного процесса, особенно отработки сложных элементов, нагрузки спортсмена, биохимических особенностей и биомеханических закономерностей, а также подготовки качественного тренера и психолого-педагогических методов, немногочисленны. В диссертационных работах по спортивной гимнастике отсутствует судейство, а также работы по отбору новичков в связи с омоложением гимнастики. В независимой Армении диссертационных работ по спортивной гимнастике не более десятка и они не включают компонентов совершенствования систем подготовки, необходимых гимнасту высокого класса.

Տեղեկություններ հեղինակի մասին

Գոհար Բլբուլի Մկրտչյան՝ Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի գործավար, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: gohar.mkrtchyan@sportedu.am

Information about the author

Gohar Blbul Mkrtchyan, Assistant of the Chair of Gymnastics, Sport Dances, Figure Skating and Chess after Hrant Shahinyan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: gohar.mkrtchyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 01.04.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 02.04.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյան